ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 փետրվարի 2013 թվականի թիվ 9- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ , 3.1-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի <ՀՀ պետական կառավարման մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման, այդ համակարգով փաստաթղթաշրջանառության համակարգ աշխատանքային ծրագրերի մուտքագրման, հաստատման, այդ համակարգով կատարողականների գնահատման և կատարողականների հիման վրա պարգևատրման կարգը հաստատելու մասին> N 1510-Ն որոշումը՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողներին պարգևատրել 2012 թվականի 2-րդ կիսամյակի կատարողականի արդյունքներով, մարզպետարանի աշխատակազմի պահպանման ծախսերի <Քաղաքացիական, դատական, և պետական այլ ծառայողների պարգևատրում> հոդվածով նախատեսված միջոցների հաշվին՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար, գլխավոր ֆինանսիստ Ս.Դավթյանին՝ ապահովել որոշման կատարումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2013թ. փետրվարի 04
ք.Իջևան